# ՀԱՆԴԷՍ

## ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

## Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

### ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

## ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Սեպտեմբերի 27ին մեծ և արժանավայել հանդիսով սուրբ Էջմիածինը կատարեց Ազգիս Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան տօնը Գէորգեան Ճեմարանի վեցերորդ տարեդարձի հետ։ Նախընթաց աւուր երեկոյեան Վեհափառ Հայրապետը Կաթուղիկոսաց յատկացեալ նախնաւանդ շքեղ հանդիսով իջաւ Ս. Տաճարը։ Հետևեալ աւուր առաւօտեան հանդիսաւոր ժամերգութիւնից յետոյ կէս ժամաչափ անցած՝ Միաբանական Ուխտը կատարեց սովորական Մաղթանքը. թէ Ճեմարանի աշակերտաց և թէ միաբանից կողմանէ կարդացւեցան շնորհաւորութեան ճառեր. և ապա համայն միաբանութիւնը, Ճեմարանի աշակերտները, այլև այլ պաշտօնակալք և ժողովրդականք խումբ խումբ ներկայացան Վեհափառ Հայրապետին և նորա Ս. Աջը համբուրելով՝ արժանացան Հայրապետական սուրբ օրհնութեանը և ուրախ ու մխիթարուած սրտով արձակւեցան։

Մեծահանդէս Ս. Պատարագից յետոյ, որը մատոյց Ճեմարանի Կառավարիչ Անդրէաս Արքեպիսկոպոսը, միաբանական ու խոր եկեղեցական հանդէսով և «Է–ջ–մ–ը–ծ–է» շարականը երգելով ժողովրդի հետ միասին գնացին դէպի Ճեմարանը և նորա հիւսիսային դրան կամարակապի առաջ «Ով–––րք Գէ–րք» շարականը երգելուց զկնի՝ թափոր կազմելով Ճեմարանի Վեհափառ Հիմնադրի ծնողաց համար հոգեհանգիստ կատարեցին։ Յետոյ Ճեմարանի Կառավարիչ Անդրէաս Արքեպիսկոպոսը ճառ խօսեցաւ, շնորհաւորելով Ճեմարանի վեցերորդ տարեդարձը, համառօտապէս բացատրելով նորա ներկայ դրութիւնը, և բարեմաղթելով նորա Վեհափառ Հիմնադրին երկար և առողջ կեանք։

Այս շքեղ հանդէսը վերջացաւ Ճեմարանի աշակերտաց սրտառուչ երգերով ու ճառերովը և բոլոր հանդիսականք հրաւիրւեցան Ճեմարան աշակերտաց աշխատասիրած ընտիր և գեղեցիկ նկարները նկատելու։ Մայր Աթոռի հասարակաց սեղանատանը պատրաստուած էր վայելուչ ճաշ միաբանութեան և հիւրերի համար, իսկ Ճեմարանում - աշակերտաց և ուսուցիչների համար, ուր խօսւեցան և կարդացւեցան հանդիսին պատշաճաւոր ճառեր և երգւեցան ազգային երգեր։ Երեկոյեան ճրագալոյց եղաւ

և թէ տեղական և թէ ուխտաւոր ժողովրդականք մինչև ժամը 9 մխիթարւեցան Ճեմարանի աշակերտաց ներդաշնակ երգեցողութեամբ եկեղեցականքով.

Ահա Ճեմարանի Սրբազան Առաջնորդի իւր ճառի մէջ հաղորդած տեղեկութիւնները Ճեմարանի 1879—80 ուսումնական տարւոյ ներքին դրութեան մասին.

«Ճեմարանի աշակերտաց ներկայ ուսումնական տարւոյ տարեկան հարցաքննութիւնը բաւականացուցիչ էր. բոլոր աշակերտները փոխեցին իւրեանց դասարանները, բացի չորսից, որոնք մնացին Ա. դասարանում. Զ. դասարանից փոխւեցան Ճեմարանի Ա. լսարանը տասն և երկու աշակերտ. սոցանից երեքը դեռ չեն վերադարձել ամառային արձակուրդից. Լսարանի մէջ շաբաթական քսան և չորս դասախօսութիւն է լինում, որոնցից ինը կրօնական, իսկ տասն և հինգը լեզուագիտական. Յառաջագայ տարիներում յաջորդաբար կբացւին և Բ. և Գ. լսարանները, որոց մէջ կաւելանան և մանկավարժական և փիլիսոփայական դասախօսութիւններ.

«Աշակերտները ըստ հասարակի ջանասէր էին և բարեկարգ, որոց առողջութեանը համար հոգ է տանում Պ. Բժիշկ Տ. Տէր-Գրիգորեանցը. Անցեալ տարի Ճեմարանը ունէր հարիւր տասն և հինգ աշակերտ, որոնցից երկուսը արձակւեցան Ա. և Գ. դասարաններից զանազան պատճառներով. երկուսը Ե. և Զ. դասարաններից ուղարկւեցան իւրեանց հայրենիքը հիւանդութեանց պատճառով. մէկը Ա. դասարանից արձակւեցաւ իւր խնդրանաց համաձայն. իսկ երեքը որոնք փոխադրւած էին Ա. լսարանը, դեռ չեն վերադարձած ամառային արձակուրդից. Ներկայ ուսումնական տարւոյ սկըզբում Ա. և Բ. դասարանաց մէջ աւելացաւ քսան և երեք աշակերտ, որով Ճեմարանի աշակերտաց թիւը հասաւ հարիւր երեսունի, սոցանից քըսան և մէկը Ա. դասարանումն են, քսան և մէկը Բ. դասարանում, քըսան և չորսը Գ. դասարանում, քսան և չորսը Դ. դասարանում, տասն և ութն Ե. դասարանում, տասն և երեք Զ. դասարանում, և ինը Ա. լսարանում. Ճեմարանը ունի տասն երկու ուսուցիչ, որոնցից մէկը եպիսկոպոս, երեքը վարդապետ, մէկը սարկաւագ և մնացեալները աշխարհական. այս վերջիններից մինը ուրիշ երկու աշխարհական անձանց հետ վարում է և վերակացութեան պաշտօնի.»

Ահա այս հանդիսում կարդացած ճառերից մի քանիսը, որոնք արժան կհամարիմք հրատարակել ամսաթերթիս միջոցաւ:

### ԳԵՐԱՊԱՏԻ՜Ւ ՀԱՐՔ ԵՒ ՅԱՐԳՈ՜Յ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Ամեն մի ազգ ունեցել է և ունի իւր քաղաքական և եկեղեցական հանգէսները. ամէն ազգի մէջ զանազան ժամանակներում յայտնւել են անձինք, որոնցից ոմանք իւրեանց ազգի քաղաքականութեանը մատուցած

շահաւոր ծառայութեանց ի տրիտուր՝ արժանացած են իրանց ազգի կող-
մից անմահ յիշատակութեան քաղաքական հանդէսների միջոցաւ. և ո-
մանք եկեղեցւոյն արած ծառայութեամբը արժանացած են նոյն փառաւոր
վարձուց եկեղեցական հանդէսներով։ Իսկ մեր Հայկեան ազգը՝ այն օրից,
երբ քաղաքականապէս ապրելուց դադարեց, դադրեց և քաղաքական
շահերից, հետևաբար և հանդիսակատարութիւններից։ Այնուհետև Հայ-
կական սուրբ Եկեղեցին դարձաւ քաղաքականութիւնից զրկուած Հայ
ազգի ապաստանարանը, ազգային կեանք և կեդրոնը. նա կցեց իրան
ազգի շահերին, այնպէս որ ծառայել եկեղեցւոյ՝ նշանակում էր ծառայել
Ազգին և փոխադարձաբար։ Հայկական Եկեղեցին առնելով իր վերայ և
կրօնի և Ազգի պահպանութեան պարտքն և իրաւունքը, ամփոփեց իր մէջ
անբաժանելի կերպով և երկուքի շահերը հաւասարապէս և այս երկուքի
շահերին ծառայող անձանցը անմահացրեց իր մէջ Ազգային—Եկեղեցա-
կան տօնակատարութեանց հանդէսներով։ Օրինակի, Հայկական եկեղեցին
տօնում Պարթևազն Ս. Գրիգորին, Սահակին, Մեսրովբին և սոցա
նմաններին ոչ թէ նոցա անարատ բարոյականութեան, սրբութեան և
Հայ ազգի մէջ քրիստոնէական կրօնի տարածելու համար միայն, այլ և
նորա համար՝ որ նոքա այդ ամէնը ունենալով հանդերձ ծառայեցին
և անչափ ծառայեցին Ազգի մտաւոր և բարոյական կրթութեան և զար-
գացութեան մեծ գործին, որ մի ազգի յարատև կենդանութեան և
գոյութեան ամենահաստատ հիմնաքարն է. այլ և նորա համար, որ նոքա
իբրև Ազգի և Հայրենիքի անձնուէր պաշտպաններ անվեհեր ախոյեան էին
հանդիսանում նոցա ներքին և արտաքին թշնամեաց դէմ։ Հայկական Ե-
կեղեցին տօնում է մեծ Տրդատին, Վարդանին և սոցա նմաններին ոչ թէ
նոցա անձնական սրբութեան և ազգի ներքին և արտաքին թշնամեաց դէմ
կատարած օրինակելի քաջագործութիւնների համար միայն, այլ մանա-
ւանդ կրօնի հաստատութեանը և տարածմանը արած ծառայութիւնների
համար։ Այսպէս ահա Հայկական Եկեղեցին շփոթեց ազգի և կրօնի շա-
հերը և իր մէջ այնպիսի մի ուղղութիւն մարմնացրեց, որ մէկին մատու-
ցած ծառայութիւնը և միւսին էր վերաբերւում հաւասարապէս. և երկու-
ցունց շահուց ծառայողներին ևս անմահացրեց իր մէջ ազգային—եկե-
ղեցական տօնակատարութեանց հանդէսներով։

Ահա այսպիսի մի ազգային—եկեղեցական հանդէս կատարելու բաղդն
ունեցած ենք այսօր, Գերապատիւ Հարք և Յարգոյ հանդիսականք, կա-
տարելով մեր Ազգի և Եկեղեցւոյ Աստուածընտիր [illegible] Գէորգ Դ. մեծ
Հայրապետի անուանակոչութեան հրաշափառ տօնը, որ բացի իր անձ-
նական քաջարթուն հսկողութիւնից և անխոնջ հոգածութեամբ Եկեղեցւոյ
և Ազգի շահուց նախանձախնդիր պաշտպան հանդիսանալուց, իր պատ-
կառելի անունը ևս կապել է անբաժան Ազգի և Եկեղեցւոյ յիշատակաց
հետ, որոնք Հայ ազգի պատմութիւնը յաւիտեան յաւիտենից օրհնա-
բանելով պէտք է անմահացնէ իր էջերում։ Այս մեր Վեհափառ Հայրա-

պետի խոհականութիւնն էր, որ քաջ համոզուելով թէ՝ մի ազգի գոյու-թեան և պահպանութեան ամենաապահով գրաւականն և միջոցն ազգային ոգւով դաստիարակութիւնն է, բացի ամենայն հայաբնակ քաղաքներում և գիւղերում դպրոցաց թիւը շատացնելուց, հոգացաւ կառուցանել և Մայր Աթոռիս Գէորգեան Ճեմարանը, որի վեցերորդ տարեդարձը բաղդ ունեցանք կատարել այսօր Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան հանդիսի հետ. Վեհափառ Հայրապետի անդրդուելի հաստատամտութիւնը և անձուլ խնամատարութիւնն էր, որ նոյն Ճեմարանը այս վեց տար-ւայ ընթացքում անսայթաք ուղղութեամբ խնամելուց և պահպանե-լուց յետոյ ջանք է անում մշտնջենաւորապէս ապահովել նորա գոյու-թիւնը և կառավարութիւնը. Վեհափառ Հայրապետի մեծագործութեան շնորհքն է, որ այսօրեան օրս Ս. Էջմիածինը իւր տպագրական գործա-նէութիւնը աւելի ընդարձակեց՝ փոքր ի շատէ ազգօգտակար հրատարա-կութիւններով, Վերջապէս այս Վեհափառ Հայրապետի ջանքի արդիւնքն է հայկական ձայնագրութեան արուեստի վերածնութիւնը Ազգիս մէջ և Աթոռոյս մեծածախ թանգարանաց շինութիւնը, որով Մայր Աթոռս ա-պահովւում այսուհետեւ իւր ազգային հնութեանց անվթար պահպանու-թեան մասին.

Ահա մի այսպիսի վեհիմաստ և ազգախնամ Հայրապետի անուանակո-չութեան հանդէսը վայելելու համախմբուած ենք այսօր, Գերապատիւ հարք և յարգոյ հանդիսականք, ուրեմն միաբերան գոչենք «Կեցցէ Վե-հափառ Հայրապետն ամենայն Հայոց Տ. Գէորգ Դ. Ջերմեռանդն սրտի-մաղթենք առ Ամենաբարձրեալն Աստուած, որ երկարէ մեր Վեհափառ Հայրապետի կեանքի օրերը և շնորհէ Նորան խաղաղ և առողջ կեան-քով տեսնել և վայելել հայկական Եկեղեցուն և Ազգին արած բարիք-ների քաղցր պտուղները աստ և ի հանդերձելում. ամէն։

Ս. Վ.

ՅԱՒՈՒՐ ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ԵՒ Զ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ։

ՎԵՀԱՓԱ՛Ռ ՏԷՐ.

Եթէ քաղցր է տեսանել զճակատս, որոց ի մարտ պատերազմի ընդդէմ հակառակորդաց շահատակեալ փառս և պարծանս յաղթանակի յանձինս գրաւեն, և զօրականն՝ զի մերկացուցին զոգիս բազմաց ի մարմնոց՝ թա-ւալեալ զնոսա յարիւն ապաժոյժ, գովեստից և օրհնութեանց լինին ար-ժանաւոր, քանի՜ քա՜ղցր է արդեօք բոլորել զափնիս ի ճակատ քրտնա-թոր եւ պէս պէս յօրինել զդրուատս ի գլուխ մտախոհ, որ հանապազ ջանայ և տքնի տաժանեալ յանձին, և այն ոչ զի շահեսցի զայս ոք, կո-րուսեալ զայլ ոք, այլ զի խոհական իմն ուղղութեամբ ուռկանաւ զի-

տութեան և կրթութեան կորզեսցէ զբազումս ի ժանեաց տգիտութեան՝ փարատել, մերժել զխաւար մահաշանդոյն քնարեր, զի կեան ի վերայ կենաց յաւելցէ բազմաց, ծագեալ զլոյս խարխափելոցն ի խաւարի։

Հանգոյն և Դուք, Վեհափառ Տէր, զհետ կրթութեան ոյինդ նկրտեալ տարածեցէք զհայրապետութ բազուկս Ձեր, ժողովել զմանկունս վայրավատինդ հօտի, ի դրանց եկից մինչև ի մուտս արեգ — արփւոյն. ի միջերկրեայց մինչ ի սահմանս հիւսիսոյ, զօդ զիտութեան շաղկապ սիրոյ ի միութիւն անմեկնելի գնոսա կապեցէք, միանգամայն առաջնորդել զամենեսին ի մի միայն սուրբ նպատակ, ի մնաւոր բարոյական վերածնութիւն ազգիս և զուն գործէք յերջանկաւէտ բարօրութեան և ի նախնի փառս պանծացեալ տեսանել զնա։ Որոյ ի ցոյց զայն հոյակապ կանգնեալ տաճար վեհինաշուք՝ անդ՝ ուր երբեմն աւերակաց սեաւ սեաւ ի կոյտ քարանց զերբուէք անսիլ տեսուր, անսիլ տաղտուկ ընծայէին զբնութիւն ուր և այժմէն առատահեղ հեղուն ջանք իմաստից ի յարբումն ի զովացումն ուսումնատենչս մանկտւոյ։ Այո, քաջ են ճանաչմունքդ, ո՛ Աստուածարեալ Հայրապետ, թէ կանգնման անկեալ հօտի՝ դեղ դարմանոյ՝ լոյս գիտութեան և կրթութեան միայն են պէտք, զի որ ազգ, որ սիգապանծ գնաց ի զօրութիւնս ձեռաց, շաւղեալ ի պերճանս և ի վայելս անդուշելով զկրթութիւն, այնպիսւոյն փառք և պարծանք յոյժ վաղանցիկք եղեն արդարև. որպէս է տեսանել ի պատմութիւնս ազգաց։

Եւ զի մեզ թուել աստանօր զբովանդակ գործս Հօրդ հասարակաց, որք ակներև կան ամենեցուն, որոց առաջ միաս ունիցիս մինչ մեն մի ամաց տարեգրութիւն Քոյդ հովուութեան նշանաւորք են յոյժ մեծագործութեամբ Ձերով և միշտ ընդ առաջնակարգսն ունիցին զտեղի ի պատմութեան Թորգոմեան ազգիս։

Այլ զի՞նչ հատուցումք արդեօք մեր, սանունք Քո, վերստին ծնեալք ի Քէն ի լոյս իմաստութեան տրիտուր այսքանեաց Քոյոց բարեաց, բայց զի բերել զշնորհակալիս անկեղծ և ջերմ սրտի իբրև զխունկս անուշունս և կարդալ Քեզ ի թիկունս զանուանակիցն Քո զքաջայաղթ Զօրավար, զորոյ արիասիրտ նահատակութեան կատարեմք այսօր զյիշատակ և վերուղղել մաղթանս առ Բարձրեալն՝ որ զօրացոյց զՔեզ ի գործս Քո, յաւելուլ ի կեանս ամս ամաց, որպէս զի ի կէտ անդր նպատակի ժամանեալ, ցնծասցես ի պտուղս պղեստանից Նորատունկ։

Ի դէմս համօրէն աշակերտաց ճեմարանի

1880 ամի

Սեպտեմբեր 27.

Աշակերտ Զ. Քաջարունի

Աբրահամ Զամինեանց

«ՄՇԱԿԻ» Յ. Մ. ՅՕԴՈՒԱԾԱԳՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մշակ» 151 № ում կարդացի Յ. Մ. ստորագրութեամբ մի առաջնորդող յօդուած, որի գրողը ցանկութիւն էր յայտնում իմանալ թէ էջ-